



ԵՐԿՈՒՇԱՔԹԻ, 17 ՆՈՅԵՄԲԵՐ, 2025

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն պարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալս ՚իս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՇԱՐԱԿԱՆ

*Մեծ ու զարմանալի են Քո գործերը, Ամենակալ Տէր Աստուած մեր,
Արդար ու ճշմարիտ են ճամբաներդ, Ամենակալ Տէր Աստուած մեր:*

Տէր, ո՛վ չի վախենում Քեզնից, Ո՛վ է, որ չի փառաւորում Քեզ,

Քանի որ Դու ես միայն սուրբ, (2) Միայն սուրբ: (3)

*Բոլոր ազգերը պիտի գան Քո առջեւ ու Քեզ պիտի երկրպագեն,
Քանի որ իրաւունքներդ յայտնուեցին Բոլոր ազգերին, Ո՛վ Թապաւոր:*

ԱՊՈԹՔ

Տէ՛ր Ամենակալ եւ արարիչ ամենեցուն, խոնարհ սրտով շնորհակա-լութիւն կը յայտնենք Գու անսահման օրհնութիւններով եւ տուած բա-րիքներով համար: Շնորհակալ ենք կեանքի պարգեւին, առողջութեան, իսողաղութեան, պահպանութեան եւ Գու սիրատաւ ներկայութեան: Օրհնէ՛ ու պահէ մեզ, Տէ՛ր, Գու աստուածային հովանաւորութեամբդ, եւ առաջնորդէ մեզ ճշմարիտ ուղիներով: Լեցուր մեր սրտերը շնորհա-կալութեան հոգիով, որպէսզի մշտապէս ներբողենք Գու սուրբ անունդ, ով Բարձրեալ, միշտ փառաւորելով ամենասուրբ Երրորդութիւնդ Հայր, Որդի եւ Սուրբ Հոգի, յաւիտեանս. ամէն:

ՇԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հզօր, սուրբ եւ անմահ, որ յայտնեցար վասն մեր, ողորմեա մեզ:

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վրանգից մերոց: Եւ ես իսողաղութեան գՏէր աղաչես-ցուք: Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուա-ծածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստ-ուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՊՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Ամենասուրբ Երրորդութիւն, սուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւեն ես նեղելոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 92

ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Ինչ լաւ է գոհութիւն մատուցանել Քեզի, Տէր,
եւ ներբողել Քու անունդ, ով Բարձրեալ:
Ամէն առաւօտ Քու սէրդ պատմել,
եւ գիշերները հաւատարմութիւնդ հոչակել՝
տասնալար նուրագարանով ու տաւիղով, եւ քնարի
նուագակցութեամբ:
Գործերովդ զիս ուրախացուցիր, ով Տէր,
ըրածներդ տեսնելով՝ ցնծութեամբ կ'երգեմ:
Ինչքան մեծ են գործերդ, Տէր, ինչքան խորունկ են Քու
խորհուրդներդ:
Յիմարները չեն գիտեր, անմիտները չեն հասկնար,
թէ՛ նոյնիսկ եթէ ամբարիշտները խոտի նման կը բուսնին,
անիրաւ գործ ընողները յաջողութիւն կը գտնեն,
եւ սակայն ընդ միշտ պիտի կորսուին:
Իսկ դուն, ով Տէր, յաւէտ կ'իշխես բոլորին:
Թշնամիներդ, ով Տէր, թշնամիներդ պիտի բնաջնջուին,
ցիր ու ցան պիտի ըլլան անիրաւ գործ ընողները:
Բայց զիս անչափ զօրացուցիր՝ վայրի ցուլի մը նման,
ազնիւ իւղով օծեցիր զիս:
Տեսայ անկումը դարանակալ թշնամիներուս,
եւ լսեցի աղաղակը վրաս յարձակող չարագործերուն:
Արդարները պիտի ծաղկին արմաւենիի նման,
պիտի աճին Լիբանանի մայրիներուն պէս:
Տիրոջ տան մէջ պիտի տնկուին,
մեր Աստուծոյն տանարին մէջ պիտի բուսնին:
Նոյնիսկ ծերանալէ ետք պտուղ պիտի տան,
պիտի մնան կորովալից ու մշտաթարմ,
որպէս վկայութիւն՝ թէ ուղիղ է Տէրը,
իմ Վէմս, եւ անոր քով անարդարութիւն չկայ:



ԱՐԴԱՐՈՒԹԵԱՆ ՎԱՐՉԱՏՐՈՒԹԻՒՆԸ

Հեղաքրքրական է այս Սաղմոսին փրուած բացաքրականը. Երգ՝ Շաքաթ օրուան: Շաքաթ, որ կը նշանակէ եօթներորդ օր, որ նաեւ հանգիստի օր: Այսքեղ, սակայն, կայ այն միւս հանգիստի խորհուրդը, որ Տէրը քալ խոսքաքալ: Նախ կը սկսի այն հասկացողութեամբ թէ պէքք է եւ ինչ լաւ է քառք եւ գոհու-թիւն քալ Ասքուծոյ, շնորհակալութիւն յայքնէլ եւ ներքողէլ, ամէն առաւօք Անոր սէրը պաքամէլ, իսկ գիշերները Անոր հաւաքարմութիւնը հռչակէլ ոչ միայն բառերով, այլ՝ քարքեր քեասակի նուագարաններով: Այսքեղ նշուած նուագարանները հեղաքրքրականօրէն պարգ նուագարաններու մասին չէ խօքքը, այլ՝ մեր անձերով, մեր կեանքով ցոյց քալու: Ինչո՞ւ արդէօք: Ասքուծոյ կաքարած գործերուն համար: Ասքուծոյ գործեր երբ կ՛ըսենք նկաքի ունենանք երկու բան.- առաջին՝ սքեղձագործութիւնը, երկրորդ՝ քրկագործութիւնը: Երկուքի պարագային ալ մեձ են եւ ինչքան խորունկ: Այս մեձ ու խորունկ խորհուրդին դիմաց յիմարները չեն գիքեր ու անմիքները չեն հասկնար: Այնպէս ինչպէս պիքի ըսէ Պօղոս Առաքեալ. “Խաչեալ Քրիստոսը կը քարոզենք, որ յիմարութիւնը է շաքերուն համար, իսկ ուրիշներու համար քկարութիւն”: Սակայն խորքին մէջ իրենք են որ չեն գիքեր եւ չեն հասկնար այդ բոլորին իմասքը: Միւս կողմէ անմիջական նախադասութեան հեղ եթէ կապենք, ապա կը կարդանք այսպէս, որ նոյնիսկ եթէ ամբարիշքը յաջողութիւն գքնէ, սակայն ընդմիշք պիքի կորսուի: Իսկ Տէր յալէք պիքի իշխէ բոլորին: Եւ Տիրոջ թշնամիները պիքի բնաշնշուին: Իսկ արդարները պիքի ծաղկին արմաւենիի նման, Լիքանանի մայրիներուն պէս, խորհրդանշական արքայայքութիւն մըն է, որ ըսէլ կ՛ուզէ արդար-ներուն արմաւենիի նման հզօր ըլլալը, մայրիներուն նման մշքադալար ըլլալը, հակառակ ամբարիշքներուն խորի նման բուսնելուն: Հեղաքրքրական մէկ այլ ուրիշ պաքկեր մը արմաւենիին կաքուած, ընդ-հանրապէս արմաւենին անապաքին մէջ կը գքնուի, նոյնպէս ալ արդարներուն ներկայութիւնը այս աշ-խարհի անապաքին մէջ անոնց ներկայութիւնը արմաւենիի նման ուղիղ եւ բարձր, որոնք կը սնուին Աս-քուծոյ կենդանի Խօքքին ջուրով, եւ Լիքանանի մայրի ծառերուն նման մշքադալար: Սողոմոն իմասքուն երբ Ասքուծոյ համար քաձար պիքի շինէր բերէլ կու քայ արմաւենիի եւ մայրի ծառեր, նոյնպէս ալ այսքեղ կը նշուի, որ արդարները արմաւենիի եւ մայրի ծառի նման Տիրոջ քան մէջ պիքի քնկուին: Իսկ վերջին երկու համարները կու գան ըսելու թէ արդարները մինչեւ վերջ պքուղ պիքի քան ու պիքի մնան կորովալից ու մշքաթարմ, ակնարկելով այն իրողութեան, թէ ինչպիսի պայմաններու մէջէն ալ անցնին, անոնք պիքի մնան հաւաքարիմ որպէս վկայութիւն՝ թէ ուղիղ է Տէրը, եւ անոնք պիքի վկայեն թէ Տէրը իրենց Վեմն է, եւ Անոր քով անարդարութիւն չկայ:

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աջ բո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի նանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ բո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*